

**ԴԵՂԱՏՈՒ ՊԱՏՐԻՆՋԻ ԵԹԵՐԱՅՈՒՂԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝
ԿԱԽՎԱԾ ԲՈՒՅՍԻ ԱՃԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ**

Եթերայուղերը հանդիսանում են օրգանական տարբեր միացությունների խառնուրդներ, որոնք արտադրվում են բույսի կենսագործունեության ընթացքում: Եթերայուղերը որոշակիորեն պայմանավորում են ոչ միայն բույսի բուրմուռը, այլ նաև համային հատկանիշները:

Վեգետացիայի ընթացքում բույսի օրգաններում եթերայուղը ենթակա է ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխությունների, որոնք պայմանավորված են մի կողմից բույսի օնտոգենիկ զարգացման առանձնահատկություններով և մյուս կողմից՝ վեգետացիոն շրջանում կլիմայական պայմանների փոփոխություններով, հանքային սննդառությամբ և այլն:

Դեղատու պատրիճը (*Melissa officinalis* L.) բազմամյա դեղատու և եթերայուղատու բույս է: Նրա եթերայուղի հիմնական բաղադրամասերն են. 6-մեթիլ-5-հեպտեն-2-1-ը, լիմալոլը, ցիտրոնելալը, ներալը, գերանիոլը և այլն: Հետազոտվել է հիդրոպոնիկական և հողային մշակույթներում օդաչոր հումքից ստացված եթերայուղի որակական և քանակական կազմը: Պարզվել է, որ աճեցման տարբեր պայմաններում ստացման եթերայուղը պարունակում է վերը նշված նույն բաղադրամասերը, սակայն հիդրոպոնիկ բուսահումքում ցիտրոնելալի պարունակությունը 4,5 անգամ գերազանցել է հողայինին (հողում՝ 1,64%, հիդրոպոնիկայում՝ 7,49%): Հակառակ պատկեր է դիտվում 6-մեթիլ-5-հեպտեն-2-1-ի պարունակության տեսանկյունից. այն հողային բուսահումքում 3,5 անգամ գերազանցում է հիդրոպոնիկականին (հողում՝ 29,63%, հիդրոպոնիկայում՝ 8,59%): Հայտնի է, որ ցիտրոնելալը օժտված է կիտրոնի բույրով և համով, իսկ 6-մեթիլ-5-հեպտեն-2-1-ը՝ խակ տանձի: Հիդրոպոնիկական և հողային եթերայուղերում մեր կողմից ստացված նման որոշակի տարբերությունները կարող են զգալիորեն ազդել հիդրոպոնիկական և հողային մշակույթներում ստացված բուսահումքերի որակական հատկությունների տարբերության վրա:

Buniatyan R.J.

**QUALITATIVE CONTENT CHANGES OF ESSENTIAL OIL OF LAMONBALM DEPENDING
ON THE PLANT'S CULTIVATION CONDITIONS**

Summary

The experimental results have shown, that the content of citronellal of Lemonbalm (*Melissa officinalis* L.) hydroponic raw material is increased for 4,5 times compared with the soil culture, but, on the contrary, the content of Methil-5-heptene-2-one in the soil is exceeded for 5 times compared with hydroponic one. These differences can significantly influence on the qualitative properties of obtained raw material of plant.